Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

ՀՐԱՄԱՆԱՒ Տ. ՊԱՐԳԵՒԻ ՄՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՅ

ԳԱՆՁԱՍԱՐ
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Երեւան 1995

Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

ՔԱՐՈԶ
ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ

«Մարդը պատուի մէջ էր եւ չիմացաւ, Հաւասարուեց անբան անասուններին եւ նմանուեց նրանց»[1]:

Մարդը պատուի մէջ էր, քանզի ստեղծուեց որպէս բոլոր տեսանելի արարածների թագաւոր ու իշխան, եւ նրա համար ստեղծուեցին երկինքն ու երկիրը, բոյսերն ու կենդանիները, ինչպէս Սուրբ Գիրքն է ասում. **«Ամէն ինչ նրան հնազանդ ստեղծեցիր եւ դրեցիր նրա ոտքերի տակ»**[2]: Քանզի բոլոր արարածները մարդու ծառաներն ու սպասաւորներն են. ոմանք՝ որպէս լծկան, ոմանք՝ որպէս բեռնակիր, ոմանք էլ՝ այլեւայլ կարիքների համար: Իսկ մարդը ոչ ոքի ծառան չէ, այլ ազատ է եւ ինքնակալ: Այս է ցոյց տալիս նրա կազմուածքը, որ դէպի վեր է ուղղուած եւ ոչ թէ անասունների պէս կորագլուխ՝ ի նշան հնազանդութեան:

Երկրորդ՝ մարդն իր մէջ կրում է բոլոր արարածների նմանութիւնը. քանզի անշունչն՝ ոի պէս տեսանելի գոյացութիւն է, բոյսերի պէս աճում է, կենդանիների պէս՝ զգում եւ

---

1 Սաղմ. ԽԸ 3
2 Սաղմ. Ը 6

հրեշտակների պէս՝ գիտենում: Այս պատճառով մարդը երկրի վրայ փոքր աշխարհ է կոչւում:

Երրորդ՝ մարդու համար պատիւ է այն, որ Աստուած նախ խորհեց, թէ ինչ ստեղծի, եւ ինչպիսին լինի, ում վրայ իշխի եւ Ում պատկերն ունենայ, եւ ապա ստեղծեց մարդուն, ինչպէս ասում է. «**Ստեղծենք մարդուն Մեր պատկերով ու նմանութեամբ, եւ թող իշխի ձկներին ու ծովին**»[3]: Ո՛վ մեծասքանչ խորհուրդ. երկինքը, երկիրն ու ծովը, արեգակը, լուսինն ու աստղերը ստեղծուեցին առանց խորհուրդ անելու, մինչդեռ մարդու մասին նախապէս խորհում է Աստուած, եւ Նրա խորհելով մարդը կար իր լինելութիւնից առաջ:

Չորրորդ՝ բոլոր արարածների համար ասաց եւ եղան, հրամայեց եւ հաստատուեցին, իսկ մարդուն ձեռքով ստեղծեց, ինչպէս գրուած է. «**Տէր Աստուած վերցրեց երկրի կաւը եւ նրանից ստեղծեց մարդուն**»[4], որ խորհրդանշում է մարդու հանդէպ առաւել հոգածութիւնը:

Հինգերորդ՝ ինչպէս որ մեծատուն այրը, երբ կամենում է պատուել որեւէ մէկին, նախ նրա կերակուրն ու ըմպելիքը, տեղն ու զարդարանքներն է պատրաստում եւ ապա նրան հրաւիրում, այնպէս էլ ամենից Մեծատունը՝ Աստուած, նախ պատրաստեց այն ամէնը, ինչ անհրաժեշտ է մարդուն՝ զանազան կերակուրներ եւ ըմպելիքներ, երկինքը՝ որպէս ծածկ, երկիրը՝ որպէս յատակ, լուսատուները՝ որպէս ճրագ, գեղաձայն երգեցիկ թռչուններով եւ բազմապիսի ծառերով դրախտը՝ որպէս բազմոց, եւ ապա մեծարեց մարդուն պատուելով, որպէսզի նա ի բնէ ոչ թէ սին ու աղքատիկ, այլ առատ եւ լի բարիքների տէր լինի:

Վեցերորդ՝ մարդը ողջ աշխարհի կապն ու լրումը եղաւ, քանզի նրանից առաջ եղած իմանալի եւ զգալի գոյացութիւնները[5], որ միմեանցից բաժան էին եւ հեռու, Աստուած ժողովեց մի էութեան մէջ՝ մարդուն կազմելով իմանալի հոգով եւ զգալի մարմնով, որով երեւում է, որ մի է ողջ աշխարհը՝ Մի Արարչի կողմից ստեղծուած:

Եօթերորդ՝ անմարմինները զուրկ են մարմնաւոր, իսկ մարմնաւորները՝ անմարմին բարիքներից, իսկ մարդուն Աստուած պատուեց՝ երկու բարիքներին էլ հաղորդ դարձնելով: Քանզի ինչ որ Ինքն ունէր, տուեց եւ մարմնաւոր բարիքներն էլ չխնայեց ու չնախանձեց. ահա այս է մարդուն կրկնակի պատուելը:

Ութերորդ՝ Աստուած մարդուն զարդարեց առաքինութեամբ, որպէսզի ոչ միայն ձրի տուրքով, այլեւ վարձքով պսակի: Քանզի հրեշտակները չեն կարող ո՛չ աւելացնել եւ ո՛չ էլ նուազեցնել իրենց գոյացական վարձքը, մինչդեռ մարդը կարող է աճել առաքինութեամբ:

3 Տե՛ս Ծն. Ա 26:
4 Տե՛ս Ծն. Բ 7:
5 Այսինքն՝ հոգեւոր եւ նիւթական աշխարհները:

Իններորդ՝ մարդը երկու պատիւ աւելի ունի, քան միւսները, որոնք են՝ մեղքերի թողութիւնն ու մարմնի յարութիւնը: Եւ այստեղ հոգին՝ մարմնի, իսկ մարմինը հոգու շնորհիւ է վարձատրւում, քանզի մարմնի պատճառով ենք մեղքերի թողութիւն ստանում (մինչդեռ հրեշտակներն այդ չեն կարող ունենալ, որովհետեւ մեղքի ենթակայ մարմին չունեն). եւ քանի որ անմահ հոգի ունենք, նաեւ մարմնի յարութեան ենք արժանանում (որն այլ կենդանիներ չունեն):

Տասներորդ՝ քանզի մարդն Արարչի պատկերով ստեղծուեց, որը գերագոյն է բոլոր պատիւներից, ինչպէս գրուած է. «**Աստուած մարդուն ստեղծեց Իր պատկերով**»[6], այսինքն՝ մտքով. բանականութեամբ, անձնիշխանութեամբ, սրբութեամբ, բարութեամբ եւ այլ յատկութիւններով, եւ նրան բնակեցրեց Ադէնի անապական դրախտում եւ Իր պատուելի պատկերը զարդարեց լուսեղէն զգեստով ու անմահ կեանքով, ինչպէս ասում է. «**Մարդը պատուի մէջ էր**»: Սակայն մարդը, որ Արարչի պատկերին խառնուած ունէր նաեւ հողեղէնի պատկերը (քանզի, ինչպէս գրուած է, **արու եւ էգ ստեղծեց նրանց**[7]), զրկուեց իր պատուից եւ նմանուեց անասուններին: Մինչդեռ **Քրիստոսի համար չկայ արու եւ էգ**, ասում է առաքեալը[8], որից հետեւում է, որ սրանով մարդը նման չէ Աստծուն: Իսկ թէ ինչու Աստուած **արու եւ էգ ստեղծեց**

6 Ծն. Ա. 27
7 Նոյն տեղում
8 Տե՛ս Գաղ. Գ 28:

նրանց, այս մասին վարդապետները հինգ պատճառ են նշում:

Նախ՝ որպէսզի պատկերը տարբերուի իր Նախատիպից, քանզի ամբողջովին նմանը նոյնն է:

Երկրորդ՝ քանզի կամեցաւ, որ մարդը հոգեւոր բարիքի հետ նաեւ մարմնաւորը վայելի:

Երրորդ՝ որպէսզի ոչ միայն ձրիաբար, այլեւ մարմնի առաքինութեամբ արժանանայ պարգեւների, ինչպէս որ վերը ասացինք:

Չորրորդ՝ որովհետեւ կամեցաւ, որ մարդկանց բազմացումն այսպէս լինի. քանզի երբ նրանք ընկան հրեշտակային կեանքից, կենդանիների նման բազմացան:

Հինգերորդ՝ մարդկանց փրկութեան համար, որն իրականացաւ Փրկչի մարմնացմամբ: Այս պատճառով մարմինը խառնուեց հոգու հետ՝ միջասահման կեանքով դրուելով դրախտի միջասահման վայրում, այսինքն՝ մահուան եւ անմահութեան միջեւ, որպէսզի անձնիշխան կամքով ինչը որ ընտրի, այն էլ ստանայ՝ կա՛մ մահ, կա՛մ անմահութիւն: Եւ նրա առջեւ դրեց բոլոր ծառերը, որոնք բովանդակում էին բարիքների եւ երանութիւնների ամբողջութիւնը, որպէսզի նրանցով մարդը միշտ մնար անմահութեան մէջ: Այս է մեր առաջին եւ սկզբնական կեանքը, որը կորցրինք եւ Յարութեան օրը վերստին պիտի ստանանք:

Այլեւ մահուան սպառնալիքով մարդուն հրաժարեցրեց բարու եւ չարի գիտութեան

ծառից[9]: Իսկ նա թողեց անմահ կեանքը՝ անսալով օձի պատրանքներին ու հեշտանալով զգայութիւններով, կորցրեց իր մէջ աստուածային պատկերը եւ պատուեց անասնականը: Այսպէս մարդը հաւասարուեց անբան անասուններին ու նմանուեց նրանց բարկութեամբ, ցանկութեամբ եւ այլ յատկութիւններով:

* * *

Այստեղ երեք հարց է ծագում:

Նախ՝ ինչո՞ւ բարկանալն ու ցանկանալը մեզ համար մեղք է, իսկ կենդանիների համար՝ ոչ:

Երկրորդ՝ ինչո՞ւ ենք առաւել հեշտութեամբ մեղք գործում, քան բարիք:

Եւ երրորդ՝ ի՞նչ պատճառով ենք մեղք գործում:

Ա. Ինչո՞ւ անբան կենդանիների համար բարկութիւնը, ցանկութիւնը եւ միւս յատկութիւնները բնական են համարւում, իսկ մեզ համար՝ ախտ եւ մեղք:

Պէտք է ասել, որ սրանք անբան կենդանիների համար ոչ միայն բնական են, այլեւ նրանց պահպանող յատկութիւններ. քանզի բարկութեամբ են յարատեւում գիշատիչ գազանները. եւ բազմածին կենդանիները ցանկութեամբ են բազմանում. երկչոտութեամբ են փրկւում նապաստակներն ու բոլոր տկար կենդանիները՝ հզօրներից. որկրամոլութեամբ են գոյատեւում խոշոր կենդանիները. եւ ատելութեամբ է ոչխարը խուսափում գայլից. խրոխտութիւնը պատուելի է դարձնում ձիուն եւ այլն: Եւ սակայն այս գործերը, որ նրանց համար պահպանող նշանակութիւն ունեն, մեզ համար կործանարար են եւ մեղսալի: Որովհետեւ նախ՝ այս ախտերը նրանց մօտ չափաւոր են, իսկ մարդու մօտ՝ չափազանց: Սրա պատճառը մեր միտքն է, քանզի ինչպէս մշակն է աճեցնում բազմաբեղուն սերմը, այսպէս էլ միտքը, չարը խորհելով, մեզանում բազմացնում է այս ախտերը: Դա երեւում է, օրինակ, բարկանալիս, երբ միտքը սրտի բարկութեանը ոխ, քէն ու նախանձ է յաւելում. նմանապէս ցանկութեանը շնութիւն ու պոռնկութիւն է հանապազ յաւելում (մինչդեռ անասունները պատշաճ ժամանակին են խառնակւում) եւ որկրամոլութիւն՝ բազմազան կերակուրներ ու ըմպելիքներ յօրինելով եւ այլն: Այս պատճառով սրանք մեզ համար ախտ եւ մեղք են կոչւում:

Երկրորդ՝ քանզի այս բաները կենդանիները գործում են ըստ բնական կարգի, իսկ մենք անբնական ենք դարձնում. ինչպէս անպտուղ հողը, որ փչացնում է բարի սերմերը եւ փուշ աճեցնում, այդպէս էլ մենք Աստուծոյ տուած բարի սերմերը չարի ենք փոխարկում: Այդպէս բարկութիւնը, որ բարի է ընդդէմ չարի, փոխարկում ենք ընդդէմ բարու. եւ կամ բարու հանդէպ ցանկութիւնը փոխարկում ենք չար ցանկութեան. այսպէս եւ խոհականութիւնը վերածում ենք չար խորհրդածութեան ու խորամանկութեան. եւ սէրը, որ պէտք է առ Աստուած տածէինք, դէպի երկրաւոր բաներն

9 Տե՛ս Ծն. Բ 16-17:

ու մեղքն ենք ուղղում: Պէտք էր ատել մեղքը, իսկ մենք արդարութիւնն ենք ատում: Ցոխորտալ էր պէտք չարիքի հանդէպ եւ չհնազանդուել, իսկ մենք անհնազանդ ենք Աստուծոյ օրէնքին եւ հպարտանում ենք ընկերոջ հանդէպ: Անարգում ենք մեր հոգին, որ Աստուծոյ պատկերն է, եւ պատում մեր մարմինը, որ անասունների պատկերն է, ինչպէս ասում է. **«Մարդը պատուի մէջ էր, բայց լքեց այն եւ հաւասարուեց անասուններին»**: Եւ այս երկու պատկերի, այսինքն՝ աստուածայինի եւ անասնականի կառավարը մարդու միտքն է, որը զարգացնում է այն պատկերը, որը կամենում է: Քանզի աստուածային պատկերը սրբութեամբ եւ առաքինութեամբ գեղեցկանում է մեր մէջ, իսկ մեղսական գործերով՝ տգեղանում ու կորչում: Ինչպէս որ ժանգոտ հայելին չի արտացոլում մարդու պատկերը, իսկ մաքուր հայելու մէջ յստակօրէն երեւում է այն, այնպէս էլ երբ սրբւում ենք մեղքերից, նոյնժամ մեզանում պայծառանում է աստուածային պատկերը:

Բ. Ինչո՞ւ մարդու համար առաւել դիւրին է հակուել դէպի մեղքը, քան դէպի առաքինութիւնը:

Չորս պատճառով:

Նախ՝ որովհետեւ մարմինը, ծանր ու վայրաքարշ լինելով, դիւրութեամբ է միաբանւում մեղքի ծանրութեան հետ ընդդէմ հոգու եւ դէպի վար քաշում այն, ինչպէս որ քարը հեշտութեամբ ցած է գլորւում լեռան բարձունքից: Իսկ առաքինութիւնն ու միտքը թէպէտ թեթեւ են, սակայն, կապուած լինելով մարմնի հետ, դժուարութեամբ են մարմինն իրենց ետեւից տանում, ինչպէս երկանաքարը լեռան գլուխ բարձրացնելիս:

Երկրորդ՝ որովհետեւ զգայարանները անասնական պատկերինն են, որոնցով մարմինը դիւրութեամբ բռնւում է մեղքի հեշտութեամբ՝ իր ետեւից քաշելով միտքն ու խորհուրդները:

Երրորդ՝ որովհետեւ մարմնական հեշտութիւնն անմիջաբար ներկայում է, իսկ հոգեւորը՝ հեռու ապագայում՝ յոյսի ակնկալութեամբ, որի պատճառով յապաղում ենք հոգեւոր գործերում:

Չորրորդ՝ որովհետեւ մանկութիւնից աշխարհի հեշտութեանն ենք վարժուած եւ ընտելացած, իսկ հոգեւորին՝ անընտել:

Գ. Իսկ թէ ի՞նչն է մեղքի պատճառը, այս մասին Եկեղեցու սուրբ վարդապետներն ասում են, որ ամէն ոք մեղանչում է երեք պատճառով. նախ՝ չարունակութիւնից, երկրորդ՝ չար սովորութիւնից, երրորդ՝ տգիտութիւնից:

Չարունակութիւնը լինում է ըստ մեր մարմնի խառնուածքի, քանզի տարրերի աւելցուկը կամ պակասութիւնը մեղք է առաջացնում մեր մէջ[10]: Այսպէս՝ դառնամաղձոտները բարկացկոտ են (քանզի դառը մաղձը հրեղէն

10 Այստեղ խօսքն առնչւում է մարդու չորս հոգեբանական խառնուածքների (խոլերիկ, ֆլեգմատիկ, մելանխոլիկ, սանգուինիկ) ուսմունքին, որը Եկեղեցու հայրերը որդեգրեցին «արտաքին իմաստուններից», եւ որի հետ կապուած հասկացութիւնները շարունակում են գործածուել արդի հոգեբանութեան մէջ:

տարրն է). իսկ արեան խոնաւ եւ ջերմ աւշային խառնուածք ունեցողները՝ երկրաքարշ ու ցանկասէր. սեւ մաղձ ունեցողները ծոյլ են ու տրտմակեաց. իսկ ում մօտ օդի տարրն է առաւել, նա թեթեւամիտ է, անհամբեր ու հպարտ:

Չար սովորութիւնն այն է, երբ մարդ, մանուկ հասակից չար միջավայրում ապրելով ու չար ընկերներից չար գործեր սովորելով, հանապազ նոյնը գործելով, ձեռք բերած սովորութեան համաձայն անխտիր մեղանչում է: Քանզի, ինչպէս ասում են իմաստասէրները, երկար ժամանակ կատարուող գործը սովորութիւն է դառնում:

Իսկ տգիտութիւնը Սուրբ Գրքի եւ Օրէնքի, ինչպէս նաեւ սուրբ այրերի խրատների չիմացութիւնն է, որի պատճառով մարդ չարիքը որպէս թէ բարիք է գործում: Քանզի բարիքները տարբեր են. կայ բարի, որ զուտ եւ իսկապէս բարի է, ինչպէս Աստուած, արքայութեան կեանքը եւ առաքինի գործերը, որոնցով նմանւում ենք զուտ եւ իսկապէս բարի Աստծուն. եւ կայ բարի, որ արտաքուստ է բարի երեւում, բայց ներքուստ չար է՝ բարու կերպարանքով: Որովհետեւ եթէ չարն ակնյայտ լինէր, ոչ ոք չէր գործի (քանի որ չարից բոլորը փախչում են), սակայն գործում են, որովհետեւ այն բարիով է պճնուած լինում (իսկ բարին բոլորն են ցանկանում): Այս պատճառով արտաքուստ բարին ցանկացողները որսում են թաքնուած չարիքով, ինչպէս որ թռչունն է բռնւում թակարդով, եւ ձուկը՝ կարթով: Քանզի արծաթասէրին արծաթի

գոյնն է պատրում, պոռնիկին՝ հեշտախտութիւնը, գողին՝ ունեցուածքի շահը. եւ սրանցով մեղանչելուց յետոյ բոլորը մահուան են մատնւում, ինչպէս Աստուած ասաց նախաստեղծներին. **«Որ օրը որ ուտէք, մահով կմեռնէք»**[11]: Քանզի սա է մեր հոգու դրախտում բարու եւ չարի գիտութեան ծառը, այսինքն՝ մեր միտքը, որի մէջ խառնուած են բարին ու չարը. եւ չի կարողանում զանազանել, թէ որն է իսկապէս բարի եւ որը՝ արտաքուստ կերպարանուած: Պտուղը չար գործն է՝ ծնուած չար խորհուրդներից: Խրատատու օձը սատանան է, որ խաբում է մեզ: Իսկ պտղի գեղեցկութիւնն այն է, որ մեղքը հաճոյք է պատճառում մեր զգայարաններին, բայց երբ գործում ենք, դատապարտւում ենք մահուան: Քանզի ինչպէս որ մեղրն են խառնում մահացու թոյնին, այնպէս էլ սատանան մեղքերի մահադեղին քաղցր հեշտութիւններ է խառնում: Ինչպէս որ արեց այն ժամանակ Ադամին, այնպէս էլ այժմ՝ մեզ: Եւ ինչպէս որ Ադամն այնժամ զրկուեց դրախտի անմահ կեանքից եւ աստուածտեսութիւնից, այնպէս էլ այժմ ամէն ոք մեղանչելով՝ զրկւում է արքայութիւնից եւ աստուածտեսութիւնից: Եւ ինչպէս որ Ադամն ընկաւ **անիծեալ երկիր**[12] ու մահուան դատապարտուեց, այնպէս էլ մեղաւորը դժոխք է ընկնում՝ ըստ այմ. **«Հեռացէ՛ք Ինձանից, անիծեալնե՛ր, դէպի յաւիտենական հուրը»**[13]: Եւ ինչպէս որ Ադամը,

11 Ծն. Բ 17
12 Տե՛ս Ծն. Գ 17:
13 Մատթ. ԻԵ 41

պտուղն ուտելով, նոյնժամ հոգով մահուան մէջ յայտնուեց (թէպէտ ինը հարիւր երեսուն տարի ապրեց եւ ապա մեռաւ մարմնով), այնպէս էլ մեղաւորը մեղք գործելուց յետոյ յայտնուում է մահուան ու դժոխքի մէջ, թէպէտեւ բազում ժամանակներ անց՝ վախճանին է դժոխք մտնելու: Եւ երբ Դատաստանի ժամանակ հարցաքննութիւն լինի, ինչպէս Ադամի հետ եղաւ, այնժամ Ադամի պէս կանիծուեն մեղաւորները, եւ երկունքն ու ցաւը կպատեն նրանց, ինչպէս Եւային: Եւ այնժամ կդատապարտուի բանսարկու օձը՝ նետուելով յաւիտենական հուրը, քանզի մեղքերին հետեւում է դատաստանը, իսկ դատաստանին՝ պատիժը: Եւ Դատաստանը վախճանին է լինելու, քանզի **Տէրը մի Օր հաստատեց, որում դատելու է բոլորին**[14], ուր դատաւորն է Քրիստոս: Երբ Նա գայ Հօր փառքով սուրբ հրեշտակների հետ, այնժամ **կբաժանի գառներին այծերից**[15], ասինքն՝ արդարներին՝ մեղաւորներից: Այնժամ չարերին կհատուցի տանջանքներ, իսկ արդարներին՝ փառք՝ ըստ այսմ. «**Ովքեր բարիք են գործել, յարութիւն կառնեն յաւիտենական կեանքի համար, իսկ ովքեր չարիք՝ դատապարտութեան**»[16]. եւ դարձեալ՝ «**Մենք բոլորս պիտի կանգնենք Քրիստոսի Ատեանի առջեւ, որպէսզի իւրաքանչիւրս իր մարմնով ընդունի այն, ինչ գործել է նախկինում. եթէ չարիք է գործել՝ չարիք, եւ եթէ բարիք՝ բարիք**»[17]: Եւ այս ամէնը

14 Տե՛ս Գործ. ԺԷ 31:
15 Տե՛ս Մատթ. ԻԵ 32-33:
16 Յովհ. Ե 29
17 Հռոմ. ԺԴ 10

պիտի լինի վախճանին:

Սակայն վերադառնանք մեր նախկին խօսքին, թէ՝ մեղքի չար գործերը տգիտութիւնից ենք գործում, քանզի բարին խառնուած է չարի հետ, եւ տգէտ մտքով չենք կարող զանազանել միմեանցից: Որովհետեւ ո՛չ բնական, ո՛չ անկիրթ եւ ո՛չ էլ զգայարաններին խառնուած միտքը չի կարող զանազանել սրանք եւ ընտրել: Քանզի բնական միտքը չունի Շնորհի լոյսը, անվարժը՝ Սուրբ Գրքի կրթութեան լոյսը, իսկ զգայարաններին խառնուած միտքը խաբւում է զգայարանների կողմից: Մինչդեռ Շնորհով լուսաւորուած, Սուրբ Գրքի կրթութեամբ վարժուած եւ զգայութիւններին չխառնուած տեսական միտքն ընդունակ է ընտրել եւ զատորոշել կերպարանուած բարին ճշմարիտ բարուց:

Արդ. այս երկու բարիները տասը կերպով զանազանւում են միմեանցից:

Նախ՝ ըստ իմաստասէրների՝ կերպարանուած բարին միայն անունով է բարի, բայց ոչ՝ ըստ իրողութեան, իսկ ճշմարիտ բարին՝ թէ՛ անուամբ եւ թէ՛ իրողութեամբ:

Երկրորդ՝ սա սկզբում է բարի, իսկ վերջում՝ չար, իսկ իսկապէս բարին բարի է թէ՛ սկզբում, թէ՛ վերջում:

Երրորդ՝ ճշմարիտ բարին միաբնոյթ է եւ ոչ հակասական, իսկ պիտակաւոր բարին՝ բազմաբնոյթ եւ խառնակ:

Չորրորդ՝ սա արտաքուստ է բարի, իսկ ներքուստ՝ չար, իսկ նա բարի է թէ՛ ներքուստ, թէ՛ արտաքուստ:

Հինգերորդ՝ սա մարմնի համար է բարի, իսկ հոգու համար՝ չար, իսկ նա բարի է ե՛ւ հոգու, ե՛ւ մարմնի համար:

Վեցերորդ՝ սա բարի է այս կեանքի համար, իսկ հանդերձեալի համար՝ չար, իսկ ճշմարիտ բարին երկուսի համար էլ բարի է:

Եօթերորդ՝ սա բարի է կեանքում, իսկ մահուան մէջ՝ չար, իսկ զուտ բարին՝ ե՛ւ կեանքում, ե՛ւ մահուան մէջ:

Ութերորդ՝ սա բարի է ժամանակաւորապէս, իսկ յաւիտենապէս՝ չար, իսկ նա՝ յաւիտենական բարի:

Իններորդ՝ սա փոփոխական բարի է, իսկ նա՝ անփոփոխ:

Տասներորդ՝ այս մարմնական բարիքով սատանային ու դժոխքին են հաղորդ լինում, իսկ այն հոգեւոր բարիքով՝ անստեղծ եւ զուտ բարի Աստծուն՝ արքայութեան ժառանգորդ լինելով:

Այս զանազանութեան մասին շատերը չգիտեն եւ կերպարանուա՛ծ բարին են գործում, որպէս թէ ճշմարիտը, որ մեղք է եւ չարիք: Այսպիսով, մարդ մեղանչում է նշուած երեք պատճառներով՝ չար սովորութեան, չարունակութեան եւ տգիտութեան, որոնց բժշկութիւնը լինում է այսպէս:

Չար սովորութիւնը բժշկւում է բարի սովորութեամբ՝ բարի միջավայրում, բարի ընկերների հետ բնակուելով, քանզի մարգարէն ասում է. **«Սուրբի հետ սուրբ կլինես եւ անբիծ այրի հետ՝ անբիծ»**[18], որովհետեւ ինչպէս

18 Սաղմ. ԺԷ 26

որ չարին սովորեցինք անձնիշխան կամքով, այնպէս էլ բարուն ենք սովորում:

Տգիտութիւնը բժշկւում է գիտութեամբ՝ Սուրբ Գրքի սերտմամբ եւ սուրբ այրերի խրատներով, իմանալով Աստուծոյ կանոններն ու պատուիրանները, որոնցով զանազանւում են չարն ու բարին:

Իսկ չարունակութիւնը բժշկւում է հեռու մնալով մեր մէջ ցանկութիւններ բորբոքող կերակուրներից (ինչպէս որ վառելանիւթը պակասեցնելիս մարում է հուրը), ինչպէս նաեւ՝ մարմնի տքնութեամբ եւ չարչարանքներով:

* * *

Այս պատճառով, երբ պահքով հեռու ենք մնում աւելորդ կերակուրներից ու ըմպելիքներից եւ տքնութեամբ ու աղօթքով չարչարում ենք մեր մարմինը, ազատւում ենք խառնուածքի չարունակութիւնից, որը դէպի մեղքն է ձգում: Եւ, սրբուելով մեղքերից, մեր մէջ վերստին պայծառանում է Աստուծոյ պատկերը, որն ունէինք ի սկզբանէ՝ նախքան մեղանչելը դրախտում: Եւ քանի որ ճշմարիտ է այս, եղբայրնե՛ր, բռնադատե՛նք մեր մարմինները, պնդանանք պահեցողութեամբ, յաճախակի աղօթենք: Մեր սրտերից հանե՛նք չարիքը: Սիրե՛նք միմեանց սուրբ սրտով եւ անկեղծ մտքով: Դառնա՛նք առ Աստուած, եւ Նա կդառնայ դէպի մեզ: Ներե՛նք միմեանց, որպէսզի Նա էլ մեզ ների: Գթա՛նք աղքատներին, որպէսզի Նա էլ մեզ գթայ: Քաղցածների համար հաց լինենք եւ մերկերի համար՝

զգեստ, անտունների համար՝ օթեւան եւ հիւանդների համար՝ բժիշկ, որպէսզի Աստուած էլ մեր հոգու եւ մարմնի վէրքերը բժշկի՝ ծածկելով մեր ամօթալի գործերի մերկութիւնը, եւ մեզ ժողովի հայրական օթեւաններում՝ ամենքին արժանացնելով մշտաւէտ ցնծութեան եւ անտրտում ուրախութեան ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, Որ օրհնեալ է յաւիտեան. ամէն: